

ՊՐՈԴՈՒԿՏԻՎԻ ՀԱՄԱՐ

15990

ԽԶԳՔԵՍ ՈԳՆԵԼ ԱՄՐԱՊՆԴԵԼԻ
ՄԵՐ ՅԵՐԿՐԻ
ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Ձրակինքը բանավորելի էնթ.)

355. 4

F-34

ԽՈՐԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՐՍՈՒԹԵՆՑԿԵՆ ԿՐԵՈՒՑՈՂ ԲԼԵՎԸՐՆԵՐԻ
ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ

355:4
F-34

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՄԵՐ
ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1006
28767

(Զբուցներ ըտհովորների հետ)

124

Կազմեց Ա. Բ Ա. Բ Ն Ա Վ.
ՀԿԲԱՄ ԿԿ-ի Կուլտուրանի խմբագրությամբ

Թհմանակ Խմբակների
աշխատանքի ծրագիր
և նյութեր



ՀՐԱ.ՏԱ.ԲԱ.ԿՈՒ.ԹՅՈՒՆ

ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆԿՈՐՆԵՐԻ ԱՐՁՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ

2010

12360

Համաձայնեցրած և
ՀԱՄԿԽ-ի կԲ-ի հետ

ՀԱՅՈՒԹԻԳՏԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Դատ. № 1044

Քլիսդրառ. № 1607

Տիր. 1000

Ցեղան — 1929 թ.

Կ7011-ահ



22000.2

32354. 64

«Ի՞նչպես ոգնել ամրապնդելու մեր
յերկրի պաշտպանությունը» թեմայով զը-
րուցներն ընդգրկում են մեր յերկրի ար-
տաքին դրության համառոտ կերպով բա-
ցատրող հարցերը և դրանից բղխող այն
հերթական խնդիրները, վորոնք կանգնած
են ԽՍՀՄ բանվոր դասակարգի առաջ, վո-
րը հարկադրված է սոցիալիզմ կառուցել
կապիտալիստական պետությունների կող-
մից հարձակման չենթարկվելու մշտական
սպառնալիքի պայմաններում։ Միաժամանակ
այս զրուցները դնենդիրներին պետք է
պատկերացում տան այն հսկայական դերի
մասին, վոր ունեն արհեստակցական միու-
թյունները յերկրի զինական ուժերը ամրա-
պնդելու հնրա պաշտպանության գործում։
Համաձայն այդ բովանդակության, թեմատիկ
խմբակների այս պարապմունքներն ընդգրր-
կում են յերեք հիմնական հարց՝

1) ԽՍՀՄ վրա զինական հարձակում
գործելու սպառնալիքը,

շ) Յերկրի պաշտպանությունը և ԽՍՀՄ
արհմիությունները,

3) Միություններն ինչպես են իրենց
անդամների մեջ ուղղական պրոպագանդ
տանում:

Թեմատիկ խմբակի աշխատանքները
բաժանված են յերեք պարապմունքի, վո-
րոնք կարելի յեւ ունենալ յերեք որվա ըն-
թացքում հաջորդաբար, կամ մեկ շաբաթ-
վա ընթացքում։ Վերջին դեպքում նույն
այդ յերեք պարապմունքները տեղի յեն
ունենում 1—2 որվա ընդմիջումով, վոր-
պեսզի խմբակի ունկնդիրները հնարավո-
րություն ունենան այդ մասին վորեե գը-
րականություն կարդալ։ Յուրաքանչյուր
զրուց տեվելու յեւ 1 և կես կամ 2 ժամ։
Դեկավարի համար, վարդես նյութ, կարելի
յեւ հանձնարարել՝

Ե-ին պարապմունքի համար. — Ստալին. —
«ՀԿԿ (բ) ԿԿ-ի քաղաքական հաշվետվու-
թյունը XV-րդ համադումարում»։ Առաջին
գլուխ՝ «Համաշխարհակին կապիտալիզմի ա-
ճող ճգնաժամը»։

Ա-րդ պարապմունքի համար՝

Ժողովածու՝ «Զինվորական պրոպագան-
դը և արհեստակցական միությունները»,
եջ 25—34.

Ա-րդ պարապմունքի համար՝ Ժողո-
վածու՝ «Զինվորական պրոպագանդը և ար-
հեստակցական միությունները», եջ 34—54.
Ա. Բարանովի «Զինվորական պրոպա-
գանդի հերթական խդիրները» հոդվածը
«Տրուդ» թերթի 11/V 27 թ

ավեց ժենելան զինաթափման վերջին կոն-
ֆերենցիան:

Պարապմունքի հիմնական բովանդակությունը

ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ԽՍՀՄ ՎՐԱ ԶԻՆԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՈՒՄ ԳՈՐ-
ԾԵԼՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

ՊԹ.ՐՄ.ՊՄԸՆԿՑ ԾՐԸ.ԳԻՐԸ

Կապիտալիստական աշխարհը յեզ ԽՍՀՄ

Տնտեսության դրությունը կապիտա-
լիստական յերկրներում: Սպառման շուկա-
ների նվազումը: Խմբերի լիստական նոր
պատերազմների անխուսափելիությունը:
ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրների
քայլաբարումը: ԽՍՀՄ և կապիտալի յերկրնե-
րի «խաղաղ կենակցության» շրջանը դառ-
նում ե անցյալի սեփականություն:

Զինական հարձակման սպառնալիք

Կապիտալիստական յերկրների պատ-
րաստությունները ԽՍՀՄ դեմ պատերազ-
մելու: Սպառազինման աճումը: Բանվոր
դասակարգի վրա յեղած հարձակումը՝ կա-
պիտալիստական յերկրներում: ԽՍՀՄ խա-
ղաղության քաղաքականությունը: Ինչ ցուց

Այս պարապմունքը մշակելիս պետք է
առանձնացնել յերկու հիմնական մոմենտա,
վորոնք բնորոշում են ԽՍՀՄ միջազգային
դրությունը, այն ե՝ կապիտալիստական
աշխարհի վերաբերունքը ԽՍՀՄ-ն և դրա-
բարից բղխող զինական հարձակման սպառ-
նալիքը:

Կապիտալիստական աշխարհը յեզ ԽՍՀՄ

Վերջին տարիներում, իմպերիալիստա-
կան պատերազմից հետո, կապիտալիստա-
կան յերկրները անտեսական կողմից ամ-
րապնդվել են: Արդյունագործությունն սկը-
սել ե վերականգնվել, աճում ե համաշխար-
հային առևտուրը: Այսպես, որինակ, ստո-
րև բերած աղյուսակը պատկերացնում է
համաշխարհային կապիտալիստական արտա-
դրության աճումը՝ նախապատերազմյան
մակարդակի համեմատությամբ՝ տեխնիկա-
յի և արտադրության բացինալացման հի-
ման վրա:

Արտադրության շաբաթ նախապատե- րազմյանի համեմա- տությամբ	Մ.մ.	Պողպատ	Հացահատիկի բերք	Բամբակի գոր- ծադրություն
1925 թ.	97,9%	118,5%	107,2%	108,3%
1926 թ.	96,8%	122,6%	110,5%	112,5%

Քիչ ավելի պակաս, քան արդյունա-
գործությունը, աճում և համաշխարհային
առևտուրը: Առևտուրը սովորաբար լեռ և
մում արդյունագործությունից, բայց այ-
նուամենայնիվ մոտենում է նախապատե-
րազմյան մակարդակին:

Աղջուսակի մի շարք թվեր ցույց են
տալիս, ինչպես ընդհանուր առմամբ հա-
մաշխարհային արտադրությունը գերազան-
ցում է նախապատերազմյան մակարդակին
(ածուխի արդյունաբերության անկումը բա-
ցարփում 1927 թ. Անգլիայում լեռնագործ-
ների գործադրություն): Սակայն կապիտալիս-
տական յերկրների տնտեսական բարորու-
թյան այդ աճումը իր մեջ թագցրած ունի
մի շարք հակասություններ, վորոնք քայ-

քայում են կապիտալիստական տնտեսու-
թյունը և նրան կանգնեցնում են փակուղի-
ների առաջ: Փակուղիներ, վորոնք կապիտա-
լիստական հասարակության պայմաններում
լուծվել չեն կարող:

Կապիտալիզմի կայունությունը, աղյուսական ամրապնդումը զանազան յերկըր-
ներում համաչափ չե: Վորոշ պետություններ շարունակում են աճել (Հյուսիսային-
Ամերիկյան Միացյալ Նահանգներ և մա-
սամբ Ճապոնիա), մյուսները ապրում են
անկում (Անգլիա): Անգլիայի անտեսու-
թյունը հասել է այն աստիճանին, յերբ
այլևս հնարավոր չի արդյունագործության
մեջ խոշոր կապիտալ մուծել, յերբ «հետե-
գապես արդյունագործության Տեխնիկական
վերակազմակերպման համար բազիս չկա»
(Բուխարին): Բոլոր պետությունները ձգ-
տում են սպառման շուկաներ գտնել: Ար-
տադրած ապրանքների քանակն աճում է,
իսկ շուկաների տարողությունը, ապրանք-
ների բարենպատա, անընդմիջվող սպառու-
մը ավելի ու ավելի ընկնում է: Աշխատա-
վարձի անկման և հարկերի աճման հետե-
անքով, ընկնում է աշխատավոր ազգա-

բնտկչության կենսական մակարդակը, իջնում և նրա վճարունակությունը, պակասում ե, հետիապես, նաև ապրանքների պահանջը։ Ազգաբնակչության վճարունակության այդ պակասումը անդրագառնում ե վոչ միայն կապիտալիստական յերկրների մեջ բաժանված գաղութային շուկաների գրության վրա, այլ և իրենց ներքին շուկաների վրա, վորովհետև ազգաբնակչության վճարունակության անկումը պակասեցնում ե շուկանետված ապրանքների սպառումը։ Թե վոր չափով ընկել ե բանվորական մասսաների կենսական մակարդակը, վկայում են հետևյալ տվյալները՝ Անգլիայում միջին աշխատավարձը հավասար ե նախապատերազմանի $90^0/_{\circ}$ -ին, Իտալիայում՝ $70-75^0/_{\circ}$, Ֆրանսիայում՝ $65-87^0/_{\circ}$ և այլն։ Միևնույն ժամանակ կյանքի թանգությունը գերազանցում է նախապատերազմանին։ Կապիտալիստները իրենց արտադրությունը սացիսնալացման են յենթարկում ի հաշիվ աշխատավարձի իջեցման և բանվորական որվա յերկարածզման (մինչև 10-12 ժամի), գրանով իսկ իջեցնելով բանվորների կենսական մակարդակը և սրե-

լով հարստություն վաստակող կապիտալիստի և շահագործվող բանվորների մեջ յեղած հակասությունները։ Ապրանքների սպառման հնարավորության շարունակական նվազումը կապիտալիստներին մղում ե ապարդյուն փորձեր անելու, վորպեսզի սպառման շուկաների հարցը լուծվի խաղաղ համաձայնությունների ճանապարհով։ Սակայն «շուկաների պրոբլեմը լուծելու խաղաղ ճանապարհը կապիտալիստների համար մնում է փակ։ Կապիտալիզմի համար մնում ե միայն մեկ՝ յելք՝ ուժի, զինական ընդհարումների, նոր իմպերիալիստական պատերազմների ճանապարհով գաղութների և ազգեցությունների նոր բաժանում կատարել»։ (Մտալին)։

ԽՍՀՄ ամբողջ ճնշված աշխարհի համար հանդիսանում ե այն ճանապարհը, վորով պիտի ընթանան կապիտալիստական յերկրների պրոլետարիատն ու գյուղացիությունը և գաղութների ճնշված ժողովուրդները, իրենց ազատազրությունը ձեռք բերելու համար։ Դա բանվոր գասակարգի կողմից իշխանությունը գրավելու ճանապարհն ե, դա պրոլետարիատի դիկտատուրայի ճանա-

պարհն ե: Այն ժամանակ, յերբ կապիտալիզմը
փակուղու յե դեռ առնում, փորձելով
այդ գրությունից դուրս գալ դինված ու-
ժով, ԽՍՀՄ մեջ աճում ե խաղաղ սոցիա-
լիստական շինարարությունը: «ԽՍՀՄ գո-
յությունն ինքը, վորպես սոցիալիզմի յեր-
կրի, հանդիսանում ե համաշխարհակիցն իմ-
պերիալիզի քայլաման և նրա կայունու-
թյունը խախտող մեծագույն ազդակներից
մեկը ինչպես Յերողայում, նույնպես և
գաղութներում» (Ստալին): Վորպեսզի
«սանձահարեն» իրենց բանվորներին, վոր-
պեսզի խեղղեն համաշխարհակիցն հեղափո-
խական շարժումը, կապիտալիստներին հար-
կավոր ե նախ և առաջ հաշիվ տեսնել
ԽՍՀՄ հետ, վորը մանավանդ կապիտա-
լիստների համար հանդիսանում ե սպառման
խոշորագույն շուկաներից մեկը: Ուստի ա-
ճում են կապիտալիստների փորձերը ամեն
կերպ քայլայելու արտաքին առևտորի մե-
նաշնորհը, մեկուսացնելու ԽՍՀՄ, մեր դեմ
պատերազմ նախապատրաստելու: Յեվ յե-
թե յերկու-յերեք տարի առաջ կարելի յեր
խոսել ԽՍՀՄ և կապիտալի յերկրների մեջ
հաստատված վորոշ «խաղաղ կենացու-

թյան» մասին, ապա այժմ սկսվում ե ին-
պերիալիստական հարձակումների շրջանը:

Զինտկտն հարձակման սպառնալիքը

Աշխարհի բոլոր կապիտալիստական
յերկրները տեսնդային պատրաստություն
են տեսնում պատերազմի: Ավելացվում են
դինվորական բյուջեները, կառուցվում են
ուղղմանավեր, ոդանավեր, տանկեր և այլն:

Հսարվում են վոչնչացման և խորտակ-
ման նոր միջոցներ:

Ցեֆե չլինելին ներքին հակասություն-
ները, վորոնք թույլ չեն տալիս կապիտա-
լիստներին միմիանց հետ համաձայնություն
կայացնել ԽՍՀՄ գեն միադյալ ձակառ
ստեղծելու, նրանք արդեն համարձակվել
ելին մեզ վրա: Սակայն, մի քանի յերկը-
ներ շահագրգուված են ԽՍՀՄ հետ տրն-
տեսական կապեր ունենալու ինդրով, մի-
աժամանակ կապիտալիստական յերկրների
բանվոր դասակարգը հակազդում ե Խոր-
հրդակին յերկրների վրա նորից զինական
հարձակում գործելու նրանց ձգտուաներին:

Այդ պատճառով աշխատելով ամեն
կերպ վնասել մեր տնտեսության՝ պայ-

թյունների, ձեռնարկություններ հրդեհելու, մեր առաջնորդների վրա մահափորձ կատարելու, ԽՍՀՄ և մեր հարևանների մեջ գոյություն ունեցող խաղաղ հարաբերությունները փշացնելու, մեր արտաքին առերին խանգարելու (որինակ, Ամերիկայում մեր վոսկին չնունեցին) միջոցով և այլն, կապիտալիստական յերկրները, Անգրիայի գլխավորությամբ, միաժամանակ վճռական հարձակում են գործում բանվոր դասակարգի և նրա հեղափոխական կազմակերպությունների վրա (սպիտակ տերը ըորը մոլեգնում ե լեհաստանում, իտալյայում, Բոլգարիայում և այլն։ Գերմանիայում փորձում են ցրել Կարմիր ճակատացնների միությունը, Ֆրանսիայում պարլամենտական ընտրություններից առաջ ձերբակալեցին կոմունիստական պատգամավորներին)։ Սակայն բուրժուական յերկրների բանվորական մասսաների և գյուղացիության հեղափոխականացումը անընդհատ աճում է։ Աճում ե նաև կոմունիստական կուսակցությունների հեղինակությունը։ Դրան ազացուց ե Գերմանիական բելյատաղի և Ֆրանսիական պարլամենտի

ընտրություններին կոմկուսակցության ստացած ձայնների թվի աճումը։

Կապիտալիստաների քաղաքականությունը ամբողջությամբ մեր գեմ ուղղված լինելը պահանջում է ԽՍՀՄ բանվոր դասակարգից և գյուղացիությունից աշալուրջ լինել և առավել ևս մտահոգվել ամրացնելու Խորհրդացին յերկրի պաշտպանությունը։ ԽՍՀՄ, սակայն, չնայած կապիտալիստների բոլոր փորձերին՝ մեղ պատերազմի քաշելու գործնականում վարում ե խաղաղության քաղաքականություն։ Խորհրդացին իշխանությունը, աշխատելով իր անտեսությունը և ուազմական հզորությունն ամրապնդելու վորոնք յերկրի ինքնապաշտպանության ընդունակության հիմունքներն են կազմում պատերազմ չի ցանկանում, ամեն կերպ ձգձգում ե այն և վարում ե հետեւողական խաղաղության քաղաքականություն։

Այս ժամանակ, յերբ կապիտալիստները զինաթափման մասին յեղած խոսակցություններով փորձում ելին փափուկ բարձրներ ամբողջ աշխարհի աշխատավորության գլխի տակ, ԽՍՀՄ կառավարությունը Ժենկի զինաթափման կոնֆերենցիայում ա-

սաջարկեց կատարյալ զինաթափման ծրագիր, վորպեսզի կարողանա վոչնչացնել պատերազմ վարելու հնարավորությունը:

Կապիտալիստները, սակայն, մերեցին Խորհրդային նախագիծը, դրանով իսկ մերկացնելով նոր պատերազմների իրենց տենդալին նախապատրաստությունը:

Մերոդական ցուցմունքներ

Առաջին պարապմունքի նպատակն երացատրել ունկնդիրներին քաղաքական և տնտեսական այն պայմանները, վորի մեջ ընթանում ե մեր խաղաղ սոցիալիստական շինարարությունը: Պետք ե ունկնդիրների ուշագրությունը հրավիրել համաշխարհային տնտեսության զարգացման առանձնահատկությունների վրա (արտադրության աճումը՝ սպառման շուկաների բացակալության դեպքում), վորոնք անխուսափելի լին զարձնում իմակերիալիստական նոր պատերազմները Բացատրելով ԽՍՀՄ տնտեսական նշանակությունը, վորի շուկային կապիտալիստները կամենում են տիրապետել, միաժամանակ պետք ե ընդդեմ ԽՍՀՄ քաղաքական հըսկայական նշանակությունը, վորպես աշ-

խարհի բոլոր շահագործված և ճնշված ժողովուրդների հեղափոխական գրովի և ԽՍՀՄ գերը՝ խաղաղություն պահպանելու խնդրում (ուշագրություն հրավիրել զինաթափման խորհրդավին գեկլարացիալի վրա):

Զրուցը պետք ե ունկնդիրներին պատկերացնել տա պատերազմների սպառնալիքները և աշալրջության անհրաժեշտությունը, ունկնդիրների ուշագրությունը կենարոնացնելով մեր յերկրի սոցիալիստական շինարարության հետագա ամրապնդման կարեվորության վրա՝ վորպես յերկրի ինքնապաշտամության ընդունակության միջոցի: Զրուցի ժամանակ պետք ե խուսափել ունկնդիրներին վախեցնել կապիտալիստական յերկրների սպառազինման չափերով և դրանով ցըրել նրանց ուշագրությունը հարցի այլ կողմերի վրա, վորը խանգարում ե գնահատելու մեր միջազգային գրությունը և մեր հերթական ինդիրները:

Վերահսկիչ հարցեր

1. Ի՞նչն է կապիտալիստներին նոր պատերազմների մղում:



2. Ինչու ԽՍՀՄ կապիտալիստական
պետությունների միջազգային քաղաքակա-
նության ուշադրության կենտրոնն ե-
կազմում:

3. Ինչում ե կայանում ԽՍՀՄ քաղա-
քական և տնտեսական նշանակությունը
մնացյալ աշխարհի համար:

4. Ինչով են արտահայտվում մեզ հետ
պատերազմ սկսելու կապիտալիստակաների
փորձերը:

5. Ինչու ԽՍՀՄ խաղաղության քաղա-
քականություն ե շարունակում, հակառակ
բուրժուազիայի բացարձակ հրապարակ դա-
լուն:

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՍՀՄ
ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պարապմունքի ծրագիրը

Արհսիությունների նշանակությունը ԽՍՀՄ
իննապատճենության գործում

Արհմիությունները պրոլետարիատի
դիկտատուրալի հենարանն են: Արհմիու-
թյունները պրոլետարիատի մասսական
կազմակերպությունն են: Արհմիություննե-
րը, ոժանդակելով պրոլետարիատի դիկտա-
տուրային՝ աջակցում են կարմիր բանա-
կին, վորպես այդ դիկտատուրալի պաշտ-
պանի: Աջակցություն պրոլետարիատի
դիկտատուրալի ամրապնդման և պաշտ-
պանության բոլոր ձեւերին:

Միությունների խնդիրները յերկրի ինքնա-
պատճենության գործում

Պաշտպանության հարցերի շուրջ հա-
մակենատրոնացնել հասարակական կարծիք:

Միության անդամների ռազմական նախապատրաստությունը՝ Թիկունքի և ճակատի միաբանություն։ Աջակցություն, ամրապնդելու յերկրի նյութական բազան։ Ուշադիր և աչալուրջ վերաբերմունք դեպի արտադրությունը։ Աջակցություն պաշտպանության միջոցների շինարարության։ Պարագմունքի հիմնական բավանդակությունը

Յերկրորդ պարապմունքը նվիրված է յերկրի պաշտպանությանն աջակցելու գործում արհմիությունների առաջ կանգնած խնդիրների քննության։ ԽՍՀՄ բանվոր դասակարգն ամբողջությամբ և յուրաքանչյուր բանվոր առանձին-առանձին, պետք ե ակտիվ մասնակցություն ունենա և ունենում ե յերկրի պաշտպանությունն ամրապնդելու գործում։ Էաց իր մասնակցությունը նա արտահայտում է կազմակերպված ձեզով, իր արհեստակցական միությունների միջոցով, փորոնք իրենց աշխատանքով պաշտարկում են միությունների անդամների պահանջներին, նույն թվում նաև միության անդամների ձգտման՝ նախապատրաստվելու խորհրդադին յերկրի

պաշտպանության համար։ Զրուցն իր մեջ պարունակում ե յերկու հիմնական մոմենտ՝ ԽՍՀՄ պաշտպանության գործում արհմիությունների ունեցած նշանակության բացատրությունը և պաշտպանության ամրապնդման մեջ արհմիությունների ունեցած մասնակցության բնույթը (միության խնդիրներն այդ ասպարիզում)։ Արհմիությունների նշանակությունը ԽՍՀՄ պահապանության գործում

ԽՍՀՄ արհեստակցական միությունները պրոլետարիատի հենարանն են։ Համախմբելով բանվոր դասակարգն համարյա ամբողջովին, նրանք իրանց անդամներին կազմակերպել են պաշտպանելու խորհրդադին իշխանությունը՝ քաղաքացիական կոիվների տարիներում ստեղծելով կարմիր գվարդիայի ջնկատներ, անց են կացրել իրենց անդամների ռազմազորերը, ոգնել են խորհրդային պետությանը պարենավորման գործում։

Կապիտալիստներն իրենց յերկրներում՝ իրենց գիկտատուրան ամրապնդելու համար՝ կազմակերպում են իրենց բուրժուական,

դասակարգային կազմակերպությունները
(Փաշխտական միլիցիա՝ Խտավիայում, հրա-
ծիգներ՝ Լեհաստանում, պողպատե սա-
ղավարա՝ Գերմանիայում և այն): Խոր-
հրդալին լերկրում հարկ չկա ստեղծելու
պրոլետարական հատուկ դասակարգային
ջոկատներ, վորովհետև խորհրդային իշխա-
նության պաշտպանը կարմիր բանակն ե:

Իսկ արհեստակցական միությունները,
ինչպես կազմակերպում են բանվոր-բան-
վորուհիներին մասնակցելու սոցիալիստա-
կան շինարարության, նույնպես ել կազմա-
կերպում են բանվոր դասակարգին, պաշտ-
պանելու արդ շինարարությունը, աջակցե-
լով և ողնելով կարմիր բանակին այդ աշ-
խատանքում, վորովհետև արհեստակցա-
կան միությունների խնդիրները վողջ բան-
վոր դասակարգի խնդիրներն են, վորը
շահագրգուգած ե ամրապնդելու իր լերկրի
պաշտպանությունը ընդդեմ կապիտալիստ-
ների:

Միությունների անելիքները յերկրի պատ-
պանության գործուս:

Յերկրի պաշտպանության աշխատանքը

առարգում ե լերկրու հիմնական ուղղությամբ՝
ազգաբնակչությանը նախապատշատելով
պատերազմի յեզ նախապատշատելով ու
ամրապնդելով քիկունքը. Արհեստակցական
միություններն արդ աշխատանքում անմի-
ջական մասնակցություն են ունենում: Ծա-
գալելով լայն բացարարական կամպանիա
լուսաբանելու պատեզազմի սպառնալիքը,
նըա բնուկթը, մեր միջազգային դրությու-
նը, պաշտպանության խնդիրները և այն,
արհմիությունները մօբիլիզացիայի յեն
յենթարկամ բանվոր դասակարգի հաստ-
րակական կարծիքը լերկրի պաշտպանու-
թյան հարցերի շուրջը: Միաժամանակ, ար-
հեստակցական միությունները Ոստավիսքի-
մի հետ միասին, կազմակերպում են միու-
թյան անդամ – մասնաների պաշտպանու-
թյան նախապատրաստելու գործը: Ան պայ-
մանները, վորոնց մեջ տարվելու յե զալիք
պատերազմը մեզ հետ, ուազմական զրադի-
առություն են պահանջում վոչ միայն նրան-
ցից, վորոնք հրացանը ձեռքին գնալու յեն
պաշտպանելու ԽՍՀՄ սահմանները: Պետք
է կարողանալ պաշտպանել իրեն և իր ար-
տադրությունը հնարավոր հարձակումներից

թիկունքում (ողալին զրոհ), պահպանել
կյանքի նորմալ ընթացքը յերկրում, շխռյլ
տալ քայլայելու թիկունքը՝ մեր կարմիր
բանակի բազան։ Անհրաժեշտ ե ուշադիր
հետեւ, վորպեսզի մեր մեջ չմտնեն մեր
թշնամիների գործակալները, չխորագիտն
ու չքայլայեն մեր աշխատանքը։ Յերկրի
ավելի ուժեղ, ուազմընդունակ բնակչությունը
ճակատ կցնա. Թիկունքում կմնան ար-
տադրությանն անհրաժեշտ բանվորները, ծե-
րունիներն ու յերեխաները։ Այդ պատճառով
ել բնակչությանը պաշտպանության նախա-
պարաստելու գործը ընդգրկում ե վոչ միայն
նախակոչիկներին և փոփոխիկներին, այլ և
գործարանների, ֆաբրիկների ու գյուղերի
բոլոր բանվոր բնակչությունը։

Մեր յերկրի թիկունքը նախատի նես
սիստեմ սի տերթածան ամբողջություն ե,
նաև դիսանալով խորհրդային պետության
զինված ծողովուրդը։ Այդ միաքն առավել
յեկա ընդգծել ե կարմիր բանակի առաջ-
նորդ ընկեր Ֆրունզեն, խոսելով մեր զին-
ված ուժի շինարարության մասին։ Զին-
ված ժողովրդի մի մասը զենքը ձեռքին
կովում ե պատերազմում, մյուս մասը ֆաբ-

րիկներում և գործարաններում պատրաս-
տում ե սազմիկին ամհրաժեշտ նյութերը,
յերբորդ մասը աշխատում ե գաշտերում և
հանքերում, արդյունաբերելով ֆաբրիկնե-
րին և գործարաններին անհրաժեշտ հում
նյութը։

Թիկունքի ավ սիովուրյուն խնդիրը
կարող ե իրականանալ խորհրդային վողջ
պետության շնորհիվ։ Այդ գործում արհես-
տակամն միություններն իրենց աշխա-
տանքով աջակցում են լուծելու յերկրի
պաշտպանության տնտեսական խնդիրները,
վորոնց հաջող ընթացքից կախված ե յերկրի
պաշտպանողական և ուազմական ընդունա-
կությունը։ Բանվորը, բանվորունին, ծառա-
յողը պետք ե պարզ ու վորոշակի պատկե-
րացնեն իրենց ձեռնարկության նշանակու-
թյունը և այն պատասխանատվությունը,
վոր կրում ե այդ ձեռնակության մեջ լու-
վարակնչությունը աշխատող, գալիք վատանգի հան-
գեպ։ Մեր պաշտպանության հիմնական
տնտեսական անելիքը կայանում ե յեր-
կրի նյութական բազան ամրապնդելու
մջին, ամբացնելու նրա խոշոր արդյունա-
գործությունն ու արանսպորտը, կայանում

և պատասխության միջոցների շինարարության մեջ: Թե մեկ և թե մյուս ճյուղի մեջ մենք մեծ արդյունքների չենք հասել: Մեր խոշոր արդյունագործությունն իր մի շարք ճյուղերում արդեն անցել է նախապատերազման մակարդակից: Պետության բյուջեն աճում է: Յերկրի տնտեսական բարելավառությունն անշեղ բարվոքվում ու գարգանում է:

Մեր արդյունագործությունը կազմում է թիկունքի հիմնական մասը: Արդյունագործությունն ամրապնդելու խորհրդային պետության աշխատանքում արհեստական միությունները գործոն մասնակցություն ունեն: Նրանք բանվորների, բանվորունիների և ծառայողների լայն մասսաներ են ներդրավում մեր արդյունագործության շինարարության և ամրապնդման գործում: Աշադրության բացինալացումը, պայմանագրությունը ուսուվության մեջ բարեկարգության մեջ համար միջներ ստեղծելու, կազմակերպելով կամագոր նվիրատվությունների ֆոնդ «Մեր պատասխանը Զեմբերլինին» անունով՝ ինքնաթիւներ շինելու համար: Միություններն արդեն հավաքել են հինգ միլիոն առողջի, վորից կառուցողների միությունը հավաքել է 275 հազար ռուբլի:

ուանձին գիտակից բանվորների ու բանվորունիների ուշադրության: Կազմակերպելով բանվոր գասակարգը յերկրի պաշտպանության գործին, արհեստական միությունները իրենց աշխատանքը տանում են պաշտպանության խնդիրներին և շահերին համապատասխան: Իսկ պաշտպանության շահերը ավելի քան յերբ և իցե, պահանջում են աշխատանքային գիւղիցիպինայի բուրգացում, վնասական պայմար պարապությունների դեմ, գիտակցական, հեղափոխական վերաբերմունիք դեպի իր աշխատանքի: Միաժամանակ արհեստական միությունները նյութական ոժանդակություն են ցուց տալիս պետությանը, պաշտպանության շինարարության համար միջոցներ ստեղծելու, կազմակերպելով կամագոր նվիրատվությունների ֆոնդ «Մեր պատասխանը Զեմբերլինին» անունով՝ ինքնաթիւներ շինելու համար: Միություններն արդեն հավաքել են հինգ միլիոն առողջի, վորից կառուցողների միությունը հավաքել է 275 հազար ռուբլի:

Մերոգական ցուցմունիներ

Եյս զրուցում անհրաժեշտ է, յենե-

լով մեր միջազգային շարժումը բացատրե-
լու հարցերից, դրսեվորել արհեստակցական
միությունների այն խնդիրները, վորոնք
կապված են պատերազմի սպառնալիքի հետ:
Դեկավարը պետք է պարզաբանի, վոր ոլա-
տերազմի սպառնալիքի հետ կապված ար-
հեստակցական միությունների հերթական
խնդիրները բղխում են ԽՍՀՄ արհեստակ-
ցական միությունների բնույթից, վորով-
հետեւ արհմիությունները հանդիսանում են
պրոլետարիատի դիկտատուրայի հենարսնը:

Վորոշելով յերկրի պաշտպանության
ասպարեզում միությունների ունեցած խըն-
դիրները, անհրաժեշտ է դրսեվորել նրան-
պից հիմնականները, այն ե՝ 1) պաշտպա-
նության հարցերի շուրջ հասարակական
կարծիք առաջացնել, 2) արհմիությունների
անդամների ռազմական պատրաստականու-
թյուն և 3) յերկրի նյութական բազայի
նրա արդյունագործության ամրապնդումը,
վորը պետք է հականական դեր խաղա գա-
լիք պատերազմում: Դրանից յենելով, ընդ-
գծել միությունների անահետական աշ-
խատանքի հատուկ նշանակությունը յերկրի
պաշտպանության ամրապնդման գործում

(բացիոնալացում, վորակի բարձրացում և
պատերազմի տեխնիկական միջոցների ար-
տադրության կատարելագործում), վոր տար-
վում ե աշխատանքային դիսցիպլինայի հա-
մար մղած առորյա պարզաբին զուգընթաց:
Ցուց տալ յերկրի անտեսական հզորու-
թյունն ամրապնդելու համար մեր արդյու-
նագործությունը ընդարձակելու խնդրում
շինարարական աշխատանքի ունեցած նշա-
նակությունը: Զրուցի մեջ պետք է մատ-
նանշել նաև արհեստակցական միությունների նութական ոգնությունը կարմիր բա-
նակի տեխնիկական ամրապնդման համար,
վոր արտահայտվում է «Մեր պատասխանը
Զեմբերլենին» ֆոնդի համար նյութական
նվիրաբերություններ հավաքելով:

Գերահսկիչ Խարցեր

1. Ինչո՞ւ ԽՍՀՄ միություններն աշակ-
ցում են կարմիր բանակի ամրապնդման:
2. Ի՞նչ խնդիրներ են կանգնած ար-
հեստակցական միությունների առաջ, յերկ-
րի պաշտպանության գործում:
3. Ինչո՞ւմ ե կայանում պատերազմի և

պաշտպանության համար թիկունքի նաև
խաղաղաբաստության նշանակությունը:

4. Ի՞նչ նշանակություն ունի «Մեր
պատասխանը Զեմբերլենին» ֆոնդը:

5. Ի՞նչ է պահանջելու ապագա պա-
տերազմը յուրաքանչյուր ռազմիկից:

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՌԱԶՄԱ-
ԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴ ՄՂՈՒՄ ԻՐԵՆՑ ԱՆ-
ԴԱՄՆԵՐԻ ՄԵԶ

Պարապմունքի ծրագիրը

Ռազմական պրոպագանդի բովանդակու-
թյունը

Ծանոթություն պատերազմի սպառնա-
լիքի և նրա բնույթի հետ: Ծանոթություն
գալիք պատերազմի ձևերի և մեթոդների
հետ: Ռազմական պրոպագանդը միու-
թյունների կուլտաշխատանքներում: Յերկրի
կուլտուրական վերելքի ունեցած նշանա-
կությունը պաշտպանության գործում:

Ռազմական պրոպագանդի աշխատանքի
ձեվերը

Մարտիկի ռազմական պատրաստա-
կանությունը: Ռազմական պատրաստակա-

նության նշանակությունը կառուցող բան-
փորների համար:

Ռազմական գիտության խմբակներ,
հրաձգային գործ, մասսայական աշխա-
տանք ակումբներում և կարմիր անկյուն-
ներում (ռազմական գործի յերեկոներ,
զրուցներ, ռազմական կոնսուլտացիա, խը-
բակների մըցություն):

Զգարանների կազմակերպում: Ռազ-
մական տարրերը ֆիզիքական կուլտուրա-
յում և մարզանքներում: Արհմիությունները
և Ոսուավիաքիմի ընկերությունները: Հա-
սարակականության գերը յերկրի պաշտ-
պանությունն ամրապնդելու գործում:

Պարապմունքի հիմնական բովանդակությունը

Վերջին պարապմունքը նվիրվում է
աշխատանքի կոնկրետ ձեվերի վերլուծման,
վորը հնարավորություն և տալիս միութ-
յան անդամներին պատրաստվելու ԽՍՀՄ
ռազմական պաշտպանության: Այդ պատ-
ճառով պարապմունքի նպատակն է լինելու
լուսաբանել ռազմական պրոպագանդի բո-
վանդակությունը և այդ մասին տարված
աշխատանքի ձեվերը:

Եթզմական պրոպագանդի բովանդակու-
թյունը

Պատերազմի համար պատրաստ լինել,
նշանակում ե ծանոթ լինել այն բանին,
թե ում հետ և ինչի գեմ պետք է կռվել:

Իսկ ազգաբնակչությանը պատերազմի
պատրաստելու համար հարկավոր ե նախ և
առաջ բարձրացնել մասսաների ռազմական
գիտությունը: Այդ նպատակով արհեստակ-
ցական միությունները պետք ե լայն
մասսայական բացառական աշխատանք
տանեն, ոգտագործելով դրա համար բոլոր
գոյություն ունեցող ձեվերն ու մեթոդները՝
զրուցներ և զեկուցումներ ունենալ
գալիք ռազմական վտանգի թեմայով, կազ-
մակերպել ապադա պատերազմների բնույ-
թը լուսաբանող ռազմական անկյուններ ու
ցուցադարակներ, ռազմական թեմաների
շուրջ հարց ու պատասխանի յերեկոներ,
ռազմական գործի յերեկոներ, պատերազմի
մասնակիցների հիշողությունների յերկոներ
և այլն:

Բոլոր այդ միջոցները պետք ե ոգտա-
գործվեն, միութենական անդամ մասսանե-

ըին ծանոթացնելու համար մեր միջազգաւ-
յին դրության, մեր պաշտպանության հեր-
թական խնդիրների, մեր հարևանների հետ
և այլն:

Արհեստակցական միությունների կուլ-
տուր-կրթական աշխատանքում (ինչպես և
մնացյալ աշխատանքներում) ռազմական
պրոպագանդի ձևերին ու մեթոդներին
արվում ե այնպիսի բովանդակություն, վո-
րըն ավելի յե համապատասխանում արհ-
շարժման ընթացիկ հիմնական խնդիրներին:

Ներկայումս պաշտպանության խնդիրը
հանդիսանում ե հիմնականներից մեկը:

Դրան սպասարկելուն ե ուղղված և
մեր կուլտաշխատանքը: Յեթե յերկրին
հարկավոր ե ռազմապես պատրաստված
բնակչություն, ապա յերկիրը վոչ պակաս
չափով կարիք ունի այնպիսի աշխատավոր-
ների, վորոնք գիտակցական վերաբերմունք
ունենդեպիներկայումս մեր շուրջը ծավալ-
վող գեպքերը:

Յերկիրը կարիք ե զգում վոչ թե սոս-
կական մարտիկի, այլ կուլտուրական մար-
տիկի: Ուստի մասնակցելով բանվոր դա-
սակարգի ռազմական պատրաստության

գործին, արհեստակցական միությունները
պետք ե լայն աշխատանք ծավալեն մարտի-
կի կուլտուրական պատրաստականության
վերաբերյալ, բարձրացնելով նրա ընդհանուր
պատրաստականության մակարդակը, նրա
քաղաքական և արհեստակցական գրագի-
տությունը:

Ռազմական պրոպագանդի ձեվերը

Յերկրի պաշտպանությունը պահան-
ջում ե ունենալ պատրաստված մարտիկ՝
լավ նեանալիք, մեծ կամքի տեր, յեփված
առողջության տեր, արի, ձեռներեց, դի-
մացկուն, փորձված, բարձր վորակի, շրջա-
պատի պայմաններն ըմբռնող: Ռազմական
պատրաստականության աշխատանքնե-
րըն արհմիություններն իրենք չեն անմի-
ջականորեն տանում: Այդ աշխատանքը վա-
րում են Ռոսավաքիմը և մեր Կարմիր բա-
նակը, բայց արհեստակցական միություն-
ները աջակցում են նրանց, ոգտագործելով
արհեստակցական աշխատանքի բոլոր ձե-
վերն ու մեթոդները, միության անդամից
լավ մարտիկ դարբնելու համար: Բանվոր-
ների և բանվորուհիների ռազմական գրա-

գիտությունը բարձրացնելու համար, արհեստակցական միությունները կազմակերպում են ռազմական գիտությունների խթակների լայն ցանց, ուր միության անդամները ծանոթանում են ռազմական գործի հիմնական պրակտիկային, պատերազմ և պաշտպանություն վարելու մեթոդներին: Խմբակներում, ինչպես և մասսաական բացատրական աշխատանքներում, պետք է արտացոլվեն տեղական արտադրության առանձնահատկությունները: Դրանով վոչ միայն անհրաժեշտ վորոշություն կմտցրվի արհմիության անդամներին պաշտպանության գործին պատրաստելու աշխատանքում, այլ և հրասնենք մի ուրիշ նպատակի, այն ե՛ բանվորների, բանվորուհիների և ծառայողների համար կպարզաբանվի լերցերկի պաշտպանության գործում այս կամ այն արտադրության տեղն ու նշանակությունը, զորի մասնակիցն են հանդիսանուած իրենք:

Կառուցող բանվորների ռազմական պատրաստականությունը սերտ կերպով կապված է իրենց արտադրության հետ:

Այսպես, որինակ, ռազմական պրոպա-

դանդի պրակտիկ աշխատանքը աջակցում է կառուցող բանվորներին բարձրացնելու նաև դանագան աշխատանքի բանվորների վորակավորումը՝ կամուրջներ կառուցել, խրամատներ փորել, ինքնապաշտպանողական միջոցների կառուցումներ, ճանապարներ անցկացնել և այլն:

Բուրգուագիան ներկայումս սպորտի բոլոր տեսակները լինթարկում են ռազմական խնդիրների: Սպորտը ձեափոխվում և դառնում է ծանր վարժություն, զորի միջոցով բուրգուագիան կամենում է ըստ հնարավորի շատ մարդկի վարժեցնել: ԽՍՀՄ արհեստակցական միությունները շատ լայն ծավալում են տվել իրենց անդամների ֆիզիկական դաստիարակության գործին: Ֆիզկուլտուրայի խմբակները, սպորտի բոլոր տեսակներն ոգտագործվում են բանվորի և բանվորուհու որգանիզմն ամրապնդելու համար: Յերկրի պաշտպանության շահերն այժմ պահանջում են լայն կերպով զարգացնել նեանակության սպորտը: Արհեստակցական միությունները հնարավորություն են ստեղծում լայն կերպով կազմակերպել ձգարաններ, ավելացնելով նրանց

կազմակերպման և ընդարձակման միջոցները: Նշանաձգության գործն իմանալը չափազանց կարևոր է: Ուստի, ինչպես ասել ենկ. Տամսկին, «այն միուրյունը, վորն ավելի շատ դրամ է հատկացնուս նշանաձրգման սպորտին, միուրյան այն անդամը, վորը նշանաձրգման առաջին մրցանակը կվերցնի, մեր որերում կհանդիսանան որինակելի միուրյուն, որինակելի արհեստակցական աշխատավոր»: Նշանաձրգման գործի հետ միասին, մեծ նշանակություն են ստանում նաև սպորտի բոլոր այն տեսակները, վորոնք նպաստում են ուղագմական պայմաններում պահանջվող վարժությունների զարգացման: Ինչպես որինակ, հաղթահարել բնական և արհեստական խոչնդուներ, նետել, սոկալ, ցատկել կոմպասի գործածության հետ ծանոթ լինել և այլն: Մեր միուրյան կուլտուր-կրթական աշխատանքի կարևորագույն բնագավառը հանդիսանում են ակումբները: Միուրյան ուղագմապրոպագանդային աշխատանքը ծավալվում է ակումբների շուրջը: Ակումբներն իրենց գրադարաններից բանվոր ընթերցողին հայթալիթում են ուղագմական գրեթե,

կազմակերպում են ուղագմական անկյուններ և խմբակներ ու հանդիսանում են յերկրի պաշտպանության կարիքներն հոգացող բոլոր մասսայական ձեռնարկումների կազմակերպիչը: Հանդիսանալով բանվորների և բանվորուհիների լայն մասսաների ինքնազործուներության կազմակերպություններ, ակումբներն համախմբում են իրենց շուրջ բանվորական ակտիվին, նրանց միջոցով ամբողջ բանվոր և բանվորուհի մասսաները ներգրավելով պաշտպանության ուղագմական պատրաստության գործի մեջ:

Խորհրդավին իշխանության բոլոր միջոցների կիրառման, նույն թվում նաև յերկրի պաշտպանության ամբապնդման միջոցների մեջ հսկայական նշանակություն ունի բանվորների և գյուղացիության լայն մասսաների մասնակցությունը: Աշխատավորների հասարակական հետաքրքրությունը՝ իրենց յերկրի պաշտպանության գործին՝ առաջացրել ե այնպիսի մեծ հասարակական կազմակերպություն, ինչպիսին ե Ոսուավիոքմը (պաշտպանության, ոդագնացության և քիմիական արդյունագործության նպաստող ընկերություն): Արհեստակ-

ցական միությունները ոժանդակում են Ոստավիոքիմի բոլոր ձեռնարկութիւններին, նը-կատի ունենալով այդ ընկերության աշխատանքի կարևորությունը։ Ոստավիաքիմի արդեն ունի 3.000.000 անդամ, տասնյակ հազարակոր ուղղմական գլխությունների խմբակներ, ողաքիմիական կամանդներ և այլն։ Ազգաբնակչությանը ուղղմական պատրաստականություն տալու իր աշխատանքով Ոստավիոքիմը թեթևացնում է կարմիր բանակի գաստիարակչական գործը, նախապատրաստելով այն կաղըերը, վորոնք յերկրացին և հերթական ուղղմափորութիւնների ժամանակ իր շարքերն են անցնում։

Մերոգական ցուցմունքներ

Այս զրուցի նյութ ծառայում է ուղղմական պրոպագանդի համար միության վարած վողջ գործնական աշխատանքը։

Զրուցի գեկավարը պետք է, միությունների ներկայիս կոնկրետ խնդիրներից յելնելով, մատնացուց այնի միությունների ուղղմական պրոպագանդի բովանդակության հիմնական մոմենտները, վորոնք ծանոթացնում են միության անդամներին պատե-

րազմի սպառնալիքի (այստեղ պետք է ունենդիրներին հիշեցնել առաջին զրուցը) և պատերազմը վարելու ձեւերի ու մեթոդների հետ։ Վերջինից բղխում է ուղղմական ուսուցման և միության անդամների ուղղմական պատրաստության կոնկրետ խնդիրը, վորը կառուցող բանվորների համար մեծ նշանակություն ունի (ամրությունների կառուցում, զանազան ինքնապաշտպանողական կառուցութմեր, խրամատներ փորել և այլն)։ Այստեղ պետք է ընդգծել, վոր միությունների այդ ամբողջ աշխատանքը տցակցում է կարմիր բանակին, վորը իր յերկրային և հերթական ուղղմափորութիւնների ժամանակ ազգաբնակչությանը սովորեցնում է ուղղմական գործին։

Ուգագործելով այն գործնական ցուցմունքները, վորոնք ներկայումս արված են ԽՍՀՄ արհեստակցական շարժման ամբողջ գծով, պետք է մատնանշել, վոր ուղղմական պրոպագանդը արհեստակցական աշխատանքի խնդուրություն ճյուղ չի հանդիսանում, այլ մտնում է միությունների կուլտաշխատանքի ամբողջ սիստեմի մեջ,

վորպես նրա անբաժան մասը։ Պետք է
 բացատրել յերկրի ընդհանուր կուլտուրա-
 կան վերելքի նշանակությունը՝ նրա պաշտ-
 պանությունն ամրապնդելու տեսակետից,
 ցուց տալով, վոր կուլտուրական հետա-
 մացությունը, անգրագիտությունը մեծ
 արգելիչ ե հանդիսանում յերկրի պաշտպա-
 նության գործին զիտակցական վերաբեր-
 քունք ունենալու։ Զբուցում պետք ե ընդ-
 դել ֆիզկուլտուրայի ահագին նշանակու-
 թյունը պատերազմում մարտիկից պահանջ-
 վող հատկությունների զարգացման գործում
 (դիմացկունություն, տոկունություն, կամ-
 քի ուժ և այլն)։ Միության ռազմական
 պրոպագանդի աշխատանքի առանձին ձեերը
 քննության առնելու հետ զուգընթաց,
 պետք ե բացատրել Ոսուավիաքիմի ընկերու-
 թյան դերն ու նրա նշանակությունը, վոր-
 պես մի կազմակերպության, վոր կոչված ե
 իրականացնելու ԽՍՀՄ ազգաբնակության
 ռազմականացումը՝ պաշտպանության հար-
 ցերի շուրջ հասարակական աճող հետա-
 քրքրության հիման վրա։ Աեկավարը պետք
 ե ընդգծի Ոսուավիաքիմի ամրապնդման նը-
 շանակությունը և նրա ակտիվի լայն ոգ-

տակութումը՝ արհեստակցական միություն-
 ների կողմից, իր անդամների մեջ տարած
 ռազմական պրոպագանդի գործում։

Գերահսկիչ հարցեր

1. Ի՞նչ ճանապարհով են արհեստակ-
 ցական միությունները ռազմական պրոպա-
 գանդ մղում իրենց անդամների մեջ։

2. Ի՞նչ կապ կա միությունների ռազ-
 մական պրոպագանդի և մնացյալ կուլտաշ-
 խատանքի մեջ։

3. Ի՞նչ նշանակություն ունի պաշտ-
 պանության պատրաստության համար մի-
 ության տարած ֆիզիքական կուլտուրայի
 աշխատանքը։

4. Ինչի համար են ստեղծվում ռազ-
 մական գիտությունների խմբակները։

5. Ի՞նչ նշանակություն ունի կառու-
 ցողի ռազմական պատրաստականությունը։

6. Ի՞նչ նպատակով ե ստեղծված Ո-
 սուավիաքիմ ընկերությունը։

7. Ինչու միությունները աջակցում
 են այդ ընկերության աշխատանքներին։



2013

Հազարին գրադարան



15390
NL0048970

55.4
F-34